ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող Ալֆրեդ Քոչարյանի, ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ Սոնա Հովհաննիսյանի և վարչության պետի տեղակալ Անուշ Բաբայանի 2021 թվականի հունիսի 2-ից 4-ը Հունաստան (Աթենք) գործուղման արդյունքների վերաբերյալ

1.Անուն, ազգանունը՝ Ալֆրեդ Քոչարյան, Սոնա Հովհաննիսյան, Անուշ Բաբայան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող,

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ,

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Հունաստան (Աթենք), 2021 թվականի հունիսի 2-ից 4-ը ներառյալ

4. Հրավիրող կողմը՝

ՄԱԿ զբոսաշրջության համաշխարհային կազմակերպություն (ՄԱԿ ԶՀԿ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղման հիմնական նպատակներն են՝

- **ՄԱԿ զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 66-րդ նիստին մասնակցությունը:**

Նիստին մասնակցել են Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 40 անդամ-պետությունների պատվիրակություններ, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը:

- **ՄԱԿ ԶՀԿ գործադիր խորհրդի ընտրություններին մասնակցությունը:**

ՄԱԿ զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 66-րդ նիստի ընթացքում կայացել է ՄԱԿ ԶՀԿ գործադիր խորհրդին անդամակցության քվեարկություն, որին առաջադրվել էր նաև Հայաստանի Հանրապետության թեկնածությունը: Մասնագիտացված հանձնաժողովների՝ յուրաքանչյուր տարածաշրջանից առաջադրված, քվեարկության արդյունքում ընտրված պետությունների ցանկը (քվեարկությունը տեղի է ունենում նախապես՝ յուրաքանչյուր տարածաշրջանի հանձնաժողովի նիստի ընթացքում) հաստատվում է ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր Ասամբլեայի նստաշրջանի ընթացքում: Քվեարկության արդյունքում Հայաստանը ընդգրկվել է ՄԱԿ ԶՀԿ գործադիր խորհրդի կազմում: ՄԱԿ ԶՀԿ գործադիր խորհրդում ընդգրկվելը էապես կնպաստի ՄԱԿ ԶՀԿ հետ համագործակցության ընդլայնմանը, առաջիկա տարիներին կազմակերպության գործունեությանն ակտիվ մասնակցությանը և դրանով իսկ Եվրոպայի տարածաշրջանում Հայաստանի դիրքի բարելավմանը, ճանաչելիության բարձրացմանն ու ՄԱԿ ԶՀԿ այլ անդամ պետությունների հետ համագործակցության ամրապնդմանը:

- **ՄԱԿ ԶՀԿ Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 67-րդ նիստի անցկացման վայրի ընտրությանը մասնակցությունը:**

ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեն դիմել էր ՄԱԿ ԶՀԿ՝ Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի հաջորդ՝ 67-րդ նստաշրջանը Հայաստանում անցկացնելու առաջարկով, ինչը հավանության է արժանացել ՄԱԿ զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանային

հանձնաժողովի անդամների մեծամասնության կողմից (բացառությամբ Ադրբեջանի, որի մասին վերջինս բարձրաձայնել է):

6. Քննարկված թեմաները

ՄԱԿ զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 66-րդ նիստի օրակարգային հարցերը,

-2020 -2021 թթ. աշխատանքային ծրագրի կատարման հաշվետվությունը (ՄԱԿ ԶՀԿ տարածաշրջանային գործունեությունը, ՄԱԿ ԶՀԿ աֆիլացված անդամների գործունեությունը),

- 2022-2023 թվականների ժամանակահատվածի համար ՄԱԿ ԶՀԿ բյուջեի ընդհանուր ծրագրերը և առաջնահերթությունների վերաբերյալ հարցման արդյունքները,

- զբոսաշրջիկների պաշտպանության միջազգային օրենսգրքի նախագիծը,

- կանոնադրական մարմինների և դրանց օժանդակ մարմինների ընտրությունները,

-եվրոպական տարածաշրջանը ներկայացնող թեկնածուների առաջադրումը գործադիր խորհրդում,

- հնձնաժողովի 67-րդ նիստի անցկացման վայրը և ամսաթիվը:

7. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը

ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի ներկայացուցիչները Իսպանիայում ՄԱԿ ԶՀԿ հավատարմագրված դեսպանի և ՀՀ ԱԳՆ ներկայացուցչի հետ համատեղ ՄԱԿ ԶՀԿ գործադիր խորհրդին Հայաստանի անդամակցությունն ապահովելու նպատակով աջակցության խնդրանքով հանդիպումներ են ունեցել Հանձնաժողովի հետևյալ անդամ պետությունների պատվիրակությունների ներկայացուցիչների հետ՝

- Ալբանիայի զբոսաշրջության և շրջակա միջավայրի նախարարություն,
- Ավստրիայի գյուղատնտեսության, ռեգիոնների և զբոսաշրջության դաշնային նախարարություն,
- Խորվաթիայի զբոսաշրջության և սպորտի նախարարություն,

- Գերմանիայի տնտեսական հարցերի և էներգետիկայի դաշնային նախարարություն,
- Ուկրաինայի զբոսաշրջության զարգացման պետական գործակալություն,
- Հունաստանի զբոսաշրջության նախարարություն:

Միաժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ արտաքին գործերի նախարարության և ՀՀ դիվանագիտական կառույցների, Իսպանիայում ՄԱԿ ԶՀԿ հավատարմագրված դեսպանի կողմից իրականացված ակտիվ աշխատանքների արդյունքում նախքան քվեարկությունն արդեն իսկ ձեռք էին բերվել աջակցության պայմանավորվածություններ հանձնաժողովի մի շարք պետությունների հետ:

Նիստի շրջանակներում ՄԱԿ ԶՀԿ Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 67-րդ նիստի՝ 2022 թվականին անցկացման վայրի վերաբերյալ Հայաստանի օգտին հանձնաժողովի որոշումը խափանելու նպատակով սադրիչ ելույթով հանդես է եկել Ադրբեջանի զբոսաշրջության պետական գործակալության նախագահը: Վերջինիս ելույթից հետո նախատեսված ելույթով հանդես է եկել ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի նախագահի պարտականություններ կատարող Ալֆրեդ Քոչարյանը և հակադարձել Ադրբեջանի սադրանքին: Ելույթներից հետո Հանձնաժողովի անդամների կողմից մեկնաբանությունների բացակայության արդյունքում Հայաստանի թեկնածությունն արժանացել է հավանության և ՄԱԿ ԶՀԿ Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 67-րդ նիստի անցկացման վայր է հաստատվել Հայաստանը:

Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի ՄԱԿ ԶՀԿ աշխատակիցների հետ նախնական քննարկումներ են կայացել Հայաստանում 2022 թվականին նիստի անցկացման ժամկետների, նիստի շրջանակներում համաժողովի կազմակերպման վերաբերյալ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ՄԱԿ զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 66-րդ նիստի ընթացքում կայացել է ՄԱԿ ԶՀԿ

գործադիր խորհրդին անդամակցության քվեարկություն, որին առաջադրվել էր նաև Հայաստանի Հանրապետության թեկնածությունը: Անդամակցության նպատակով առաջադրվել է 8 պետության թեկնածություն 5 տեղի համար: Փակ քվեարկության արդյունքում կազմում ընդգրկվել են հետևյալ 5 պետությունները՝ Խորվաթիա, Ռուսաստան, Վրաստան, Հունաստան և Հայաստան: Հայաստանի օգտին կողմ է քվեարկել 24 պետություն:

ՄԱԿ զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 66-րդ նիստի ընթացքում որոշում է կայացվել ՄԱԿ ԶՀԿ՝ Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի հաջորդ՝ 67-րդ նստաշրջանը Հայաստանում անցակացնելու վերաբերյալ:

Միաժամանակ, երկկողմ համագործակցության զարգացման նպատակով քննարկումներ են կայացել Ուկրաինայի զբոսաշրջության զարգացման պետական գործակալության նախագահի հետ, մասնավորապես՝ ձեռք է բերվել բանավոր պայմանավորվածություն երկկողմ մարքեթինգային միջոցառումների/արշավների կազմակերպման վերաբերյալ:

ՄԱԿ ԶՀԿ գլխավոր քարտուղարի հետ ձեռք է բերվել բանավոր պայմանավորվածություն կազմակերպության կողմից Հայաստանին դրամաշնորհի տրամադրման վերաբերյալ:

Այցի շրջանակներում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հաշվի առնելով, որ ՄԱԿ ԶՀԿ Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 67-րդ նիստի անցկացման վայր է հաստատվել Հայաստանը, ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի կողմից նախատեսվում են համապատասխան աշխատանքներ միջոցառման

Միաժամանակ, Հայաստանի ՄԱԿ ԶՀԿ կողմից դրամաշնորհի տրամադրման մանրամասներին ծանոթանալու նպատակով ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի կողմից նախատեսվում են համապատասխան քննարկումներ:

Նաև ակտիվ աշխատանքներ են իրականացվելու մինչև տարեվերջ Ուկրաինայի հետ ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման նպատակով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Ալֆրեդ Քոչարյան,
Սոնա Հովհաննիսյան,
Անուշ Բաբայան: